



ՍԻԾՈՆ ԱՐՔԵՓԻՄԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Հայրապետական պատվիրակ
Հարավային Ամերիկայի նախագ)

Վ Ա Ր Դ Ա Վ Ա Խ

Լ Ո Ւ Յ Ա Խ Տ Ա Ն Բ

Եր Տերը Իր երկրավոր կյանքի
մեծագույն դրվագները ապրեցավ
լեռներու վրա, Իր բազմաշարչար
կյանքին հանգրվան ընտրեց
բարձունքները, ավելի մոտ Աս-
տուծո, վեր ու հեռու մարդկային մեղքերեն ու
ազմուկեն: Զեր մտքին առջև պատկերացուցեք
Իր սուրբ կյանքը: Իր աստվածային առա-
քելության Ավետարանի բարողության սկր-
սելե առաջ, կառանձնանա, կպատրաստվի
40 օր, ու կփորձվի բարձր լեռան մը կատա-
րին, Փորձության լեռան վրա, Իր Ավետա-
րանի մեծագույն պատգամները — ինը երա-
նիները — կավանդե բլորի մը գագաթին, ե-
րանությանց լեռան վրային, Իր լուսեղին
փառքը կցուցնե Բարոր լեռան բարձունքին
վրա, կխաչվի մարդոց փրկության համար՝
ծրուաղեմի մոտիկ Գողգոթայի գագաթին
վրա, ու վերջապես Իր երկրավոր կյանքի
մատյանը կփակե, լեռան մը կատարեն, Զի-
թենյաց բարձունքեն երկինք համբանալով:

Երեք սիրելագույն աշակերտներուն՝ Հով-
հաննեսի, Պետրոսի և Հակոբոսի՝ հետ կա-
ռանձնանա, կհեռանա մյուս աշակերտնե-
րեն, ու կաղոթի: Իր գեմքը կճառագային
հրաշալի պայծառությամբ, լուսեղեն ճառա-

գայթիներով, ձյունեն ավելի սպիտակ, աստ-
վածային լույսով:

Հիսուսի պայծառակերպությունը լույսի
հանգեստ է, լույսի տոնը, նկեղեցվո ամեն-
նն լուսափայլ տոնը:

Իր մարմինը լույսով կողողվի, երկնքի
լույսին կփոխվի, կլուսեղինանա, այնպես
որ Անոր սպիտակ, թափանցիկ տարրեն կա-
րելի կրլա տեսնել Իր աստվածային հոգին:
Իր գեմքը համակ լույս է, ճառագայթար-
ձակ, Իր հոգին կարտոցովա հոն, վասնդի
հոգին լույս է ու կրակ, արև է ու սեր:

Թեե երեխ աշակերտներեն թիշ մը կ'եռա-
նա, սակայն մինակ չէ, Հին Ռւստեն, Իս-
րայէլի կրոնքին երկու մեծ ուահմիքաները
չնն են, Մովսես ու Եղիա Իրեն հետ կխո-
սին: Թէ ինչե՞ր խոսեցան, ոչ ոք գիտե, ա-
վետարանիցը կըսի, «Խօսէին զելիցն որ կա-
տարելոցն է յնրուաղէմ»: — Իր վերջին
օրերու, իր շարշարանքներու և խաչելության
մասին: Առաջին մարմնավոր էակն է, որուն
հետ կխոսին անմարմին հոգիները:

Մովսես Խօսէլի առաջին փրկիչն է, օ-
րենսդիրը, հիմնադիրը Մովսեսական կրոն-
քին, իսկ Եղիա՝ առաջին մարդարեն, հրե-
ղեն կառքով երկինք բարձրացող մարդարեն:

Անոնք երկուքն ալ իրենց երկրավոր կյանքին մեջ երկնային լուսով լուսավորվեցան, առաջինը, երբ Մինա լեռնեն վար կիշներ՝ Տասնարանյա պատվիրաններու տախտակը ձեռքին մեջ՝ այնքան լուսավոր ու փայլուն էր, որ սահմանավագ իր դեմքը ծածկել բողով մը, որպեսզի իր ընկերները շշանան անոր լուսան, երկրորդը հրեղեն կառով ու ձիերով երկինք տարվեցավ. Լուսան ու կրակե երկու մարդերը կուպան վկայելու նոր լուսին, որ կփողփողի Թարոր լեռն գաղթին վրա. Անոնք եկան վկայելու ճշմարդաւ լուսավան, անոր, որ ըսավ. «Ես եմ լոյս աշխարհ»:

Հիսուս Մովսեսն ավելի լուսափայլ դեմք մը զգեցած է, լուսի շողեր կկաթին իր հութենեն, ու Եղիային ավելի հրաշալի կերպով երկինք պիտի բարձրանաւ. Անոնք այլևս պիտի չերեն, աշխարհ, ասկե վիրջ, անոնց օրենքին պիտի չունի, վասնդի նոր լույսը, նոր Օրենսդիրը եկած է:

Ամպ մը կծածկե զիրենք, ու ձայն մը կլսվի. «Դա է որդի իմ սիրելի, զմա լուարուք: Անոր միայն պիտք է ունկնդրի մարդկությունը, Անոր, որ հավիտենական կյանքի խոսքեր ունի:

Ամպը կանհետանա, ու Հիսուս իր սովորական գեմքով ու հագուստով կիշնե վար լեռնեն, աշակերտներուն բով, իր պարտականության գլուխը: Եվ անոնց կպատվիրե, որ ոչ պատմեն իրենց տեսածը:



Մովսես ու Եղիան — օրենքն ու նախահամախնդրությունը մարդարեին, արդարություն ու համոզումի քաջություն — առաքենություններ, առանց որոնց մեծություն չկա—: Գաղափարական գործիշը, առաջարև պիտք է ունենա արդարություն ու Հոգեկան արիություն իր գաղափարները իրագործելու համար: Օրենքը, բարոյական օրենքը, պարտականությանց լույսն է: Առանց օրենքի՝ արդարությունը վերացական երազ մը պիտի մնա և պիտի մեռնի, առանց Հոգեկան արիության՝ օրենքն ու արդարությունը ոչինչ պիտի արժին:

Մովսեսն ու Եղիան օրենքն ու անձնվիրությունն են, որ կիսուին Հիսուսի՝ աստվածային Օրենքի հետ, որով պիտի կատարվեր Աստուծո կամքը և իր զոհարերությունը: Անոր աշքին պատկերացավ Գողգոթայի խալը, ու գիտակցությամբ իշավ լեռնեն վար, իր պարտականության գլուխը, ավելի՝ ինքնավստահ: Անոր աստվածային հոգին կարտացոլար իր գեմքին վրա, զոր աշակերտները կտեսնեին լուսաշող:

Հիսուսի հոգվույն պայծառակերպությունը ամեն օր տեսաննելի չէր աշակերտներուն, թեև միշտ ներկա, բայց թարուն իրենց աշբերն, թարոր լեռան վրա էր, որ զայն տեսան իր գեմքին վրա, իր ներքին լույսը լուսափայլ ճառագայթումով:

Մենք մարդոց արտաքինը միայն կտեսնենք, մեր աշխերը անհաղորդ են անոնց ներքինին: Բայց, պահեր կան, երբ հոգին կփայլի դեմքին վրա, երբ արտաքին տեսքը կլուսավորվի ներքին լույսով, այն ատեն միայն կտեսնենք ու կճանշանք բուն մարդը, անոր հոգին:

Ու ներքինը, հոգեկանը կտեսնեն անոնք, որ տեսիլք ունին, ներշնչումի ընդունակ են, աստվածային շնորհը ունին: Տեսանողն ու սուրբը, արվեստագետն ու բանաստեղծը, ներշնչուցողն ու հոգետեսը կտեսնեն հասարակ մահկանացուներու շտեսածը՝ իրենց հոգեկան աշքերով: Ու հոգին տեսնելու շնորհը կտրվի անոնց, որ հավատք ունին ու սեր: Անոնք, որ կրնան ընդունարան ըլլալ Աստուծո:

Գաղափարի մը նվիրված անհատը կամ գործիշը պիտք է ունենա իր հոգիի պայծառակերպության պահերը, անդրադառնալու համար իր հոգվույն, իր էության, ու գիտակցելու համար իր գործուներուն ու առաքելության,



Պայծառակերպությունը ուրվագիծն է Համբարձման, սակայն, փառքով համբառնալու համար՝ պիտք է, որ անարգությամբ շարարտի Մարդու Որդին, խաչվի ու թաղվի՝ հարությամբ հաղթելու համար մահվան:

Աստուծո Որդին իր երկրային կյանքի ընթացքին երկու անգամ միայն փառավորվեցավ, Պայծառակերպության ու Մաղկազարդին, առաջինին, ուղից որ գաղտնի մնա, խոկ երկրորդին՝ փափագեցավ, որ մարդարենությունը կատարվի. Ան, փառաց Տերը պիտք չուներ փառքի ցուցիցին:

Հիսուսի Պայծառակերպության լեռը նապարեթի բով Թարորն է. ի՞նչ հրաշալի բարձունք, արդարեւ, Տերը անկե ավելի գեղեցիկ կատար մը պիտի չգտներ Պաղեստինի մեջ՝ իր աստվածային փառքը ցուցնելու համար: Թարոր լեռը կիշխ նաղարեթի ընդարձակ գաշտին, հրաշագեղ տեսարան մը կպարզվի անոր գագաթին վրա ելլողին աշքին, բնության գեղեցիկ համայնապատկեր մը: Ասկայն, Հովհաննես առաքյալ զայն կկոչե Սուրբ Լեռ, սրբության լեռը, որ կոչված է նաև Աղոթքի Լեռ:

Ամեն բրիստոնյա պիտք է ունենա իր պայծառակերպության լեռը, իր աղոթքի

սուրբ լեռը, անկի հաղորդակցելու համար՝ Աստուծա Հետ։ Առանց Հիսուսի շենք կրնար վերելակել սրբության լեռը, Անոր պիտի հետինք, Անոր շնորհիվ պիտի տեսնենք պայծառակերպության լուսաշող փառը, ինչպիս Փետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալները, բայց անոնց բախարին արժանանալու համար պիտի է անենալ մեկուն հավատքի վեմք, և մյուսներուն աստվածասեր, սիրազեղ սիրաբ։

Տիրոջ, սրբության լեռը կարելի չէ եղել աշխարհիկ զգացումներով, պիտության անմարուր սուրբերով ու կոշիկներով, այլ հավատքով ու սրբությամբ։ Մովսես իր կոշիկները հանեց Մինա լեռան վրա։ Աստուծու սուրբ լեռը բարձրանալու համար պիտի է մերկանալ մեղքի կոշիկներն, ատելության ու շարության կապանքներն, սիրո և սրբության թեկության միայն կարելի է վերասլանալ զեպի երկինք։

Սաղմոսներգուն կհարցնե. «Ո՞վ ելցէ ի յեան Տեառն, կամ ո՞վ կացցէ ի տեզուց սրբութեան նորա», և շատ իմաստությամբ կպատասխանե. «Որ սուրբ է ձեռօք և անրիծ սրտիւթ։ Ու սրբության Տերը կրսէ, «Երանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւթ, զի նորա զԱստուած տեսցենու։ Ստորին վիճակի մեջ, մեղքերով թաթխամած հոգին չի կը նար բարձրանալ սրբության լեռը։ Միթե ճահճի մեջ կոկացող գորտը, կամ գետնի խոռոշներուն մեջ ապրող խլուրդը կրնա՞ը մբռնել լույսի հրաշքը, կրնա՞ սավառնիլ

օդին մեջ, պիտի է ունենալ արծիվի թեր՝ ճախրելու համար կապույտ երկինքն ի վեր։

Երբ մարդ բարձր լեռան մը կատարը կերւի՝ իր հոգին կմեծնա, կազնվանա, միտրով ու սրտով դաճաններ կերեին անոնք ու ինը հուկա մը կկարծէ ինքինքր։

Անոնք որ կարող են բարձրանալ հոգիով ու սրտով Տիրոջ Սուրբ լեռը, արդարության, բարության ու սրբության բարձունքը, անոնք միայն կրնան տեսնել զԱստիված, նշմարել Անոր անմահական, լուսափայլ զեմքը, ու յսել հրեշտակներու երզը։ Ու երբ փարի, սովորական, առօրյա կյանքին կդանան՝ օծված պիտի ըլլան ցողով ու արշալուսի առաջին ցոլքերը պիտի լուսավորին անոնց զեմքը, և անոնց կյանքը պիտի վերածնի ու նորոգվի, շարը պիտի փոխվի հեզ գունուկի, և երբ Հիսուսի սիրույն վեհության բարձրանալու հասնին՝ իրենք ալ պիտի կերպարանափոխին ու պայծառակինքնի։

Մարդիկ իրենց կյանքի տափակ ու մեղսալից վիճակին, մերթ բնդ մերթ պետք ունին բարձրանալու, ելլելու իրենց պայծառակերպության լեռ՝ պահ մը մերկանալու համար նյութի կերպարանքնեն, ձերրադատվելու համար աշխարհի մեղքի շղթաներն, ու նորոգվելու համար հոգիով ու լույսով։ Եվ Աստուծու փառքը տեսնելի, ու Անոր հետ խոսեկի վերջ՝ իրենց կյանքի պատգամը ընդունելով անկե, վերածնած՝ կյանքին պիտի է իշնեն, մարուր իդեալով ու առաքալի տեսիլքով։

